

Մարինե Մուշեղյան

Երաժշտագետ, Երևանի գրականության

և արվեստի թանգարանի ավագ գիտաշխատող

Գենոցիդի արդի կերպարանքը

Ցեղասպանություն կամ գենոցիդ բառն իմ մտապատկերում միշտ կապվում էր անցյալի՝ տատիս ու պապիս հիշողությունների հետ: Նրանք իրենց գերդաստանի սպանդի վկաներն էին, որ կողոպտված, հալածված, որբացած ու ընչագուրկ մի կերպ փրկվել էին և «գաղթական» մականվան վիրավորանքը կուլ տալով իրենց մեջ ապրելու ուժ էին գտել: Ես վստահ էի, որ դա իմ և իմ ժողովրդի անցյալն է, որի կրկնությունն անհնար է մարդասիրությունը, մարդու իրավունքները որպես արժեք դավանող 21-րդ դարում: Բայց ես սխալվեցի, որովհետև գենոցիդը բազադեմ է: Այն ճարակորեն կերպարանափոխվում և ի հայտ է գալիս զանազան խորամանկ դրսևորումներով: Ես չէի կարծում, որ այն անցյալից կհայտնվի ու լկտիաբար կկանգնի իմ դիմաց՝ դեմ առ դեմ: Բացում եմ «Ուսուր Բեկ» եզդի ցեղապետին նվիրված գիրքը, որը հրատարակվել է 2012-ին: Ընթերցում եմ, թեև չեմ հավատում հեղինակին, և հասնում եմ 89-րդ էջին: Այստեղ բխվում եմ մի երևույթի, որը շատ պարզ անուն ունի՝ կեղծիք: Դա լուսանկար է, որտեղ պատկերված են Ուսուր Բեկը և Կոմիտաս վարդապետը: Ես շատ լավ գիտեմ բացառիկ մեծություն հաղիսացող երաժշտի ու գիտնականի բոլոր լուսանկարները: Ես Կոմիտաս վարդապետի արխիվի անմիջական պահապանն եմ արդեն քսանհինգ տարի Երևանի Գրականության և արվեստի թանգարանում: Նման լուսանկար գոյություն չունի, նրանք երբևէ միասին չեն լուսանկարվել և խիստ կասկածելի է առհասարակ ծանոթ եղել են, թե ոչ: Լուսանկար պատրաստողները չեն էլ թաքցնում, որ կեղծել են, որովհետև նշված է դրա հեղինակի և ոչ թե լուսանկարչատան անունը: Շարունակում եմ ընթերցել, բխվում եմ մեկ ուրիշ կեղծիքի: Խոսքն այս անգամ Կոմիտաս վարդապետի քրդական երաժշտությանը նվիրված ենթադրյալ ավարտական թեզի մասին է,

որը ժամանակին ինչ – ինչ նպատակներով արված հորինվածք է: Վարդապետը չի գրել և չի պաշտպանել որևէ թեզ: 95 – 96-րդ էջերին պատմվում է Կոմիտասի Բեռլինում՝ Շարվենկա երաժշտանոցի դահլիճում ունեցած ելույթի և դասախոսության մասին: Վերջինս լավ հայտնի է երաժշտագետներին, քանի որ ժամանակին մամուլը լայնորեն արձագանքել է փառավոր հաջողություն արձանագրած ելույթին: Վարդապետը ներկայացրել է հայ երաժշտությանը նվիրված մի պատմական ակնարկ, խոսել է հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության առանձնահատկությունների մասին, համեմատելով պատմել է արևելյան ժողովուրդների երաժշտական մտածողության ընդհանրությունների և ազգային հատկանիշների մասին: Այնուհետև, մի խումբ գերմանացի կատարողների օգնությամբ, հնչեցրել է հայ եկեղեցական ու ժողովրդական երգեր, իսկ ինքն անձամբ կատարել է շարականներ, նաև արաբերեն, թրքերեն, քրդերեն մի քանի երգ, ընդգծելու համար հայոց և ընդհանուր արևելյան երաժշտության միջև եղած տարբերությունները: Հայտնի է, որ գերմանացի քննադատները հիացմունքով և գովեստով են հանդես եկել մամուլում վարդապետի դասախոսության մասին, ինչպես օրինակ Berliner Morgenpost-ը: Կոմիտասի արխիվում պահվում է նրա ուսուցիչներից մեկի՝ նշանավոր երաժշտագետ, բյուզանդագետ, Միջազգային Երաժշտական Ընկերության բեռլինյան մասնաճյուղի հիմնադիր Օսկար Ֆլայշերի նամակը: Երաժշտագետը շնորհակալություն է հայտնում վարդապետին իր ելույթի համար և, ինչպես վայել է ազնիվ գիտնականին, խոստովանում, որ Կոմիտասի աշխատությունները շատ արժեքավոր են գիտության համար: Նա գրել է. «Պարտքս եմ համարում Միջազգային երաժշտական ընկերության անունից շնորհակալություն հայտնել Ձեզ այն սիրահոժարության համար, որով Դուք Հայ երաժշտության մասին Ձեր դասախոսություններով նպաստեցիք մեր ընկերության նպատակներին: Ձեր հմտալից և խորիմաստ դասախոսությունները օգնեցին մեզ խոր հայացք նետել այն երաժշտությանը, որը ցարդ մեզ համար գրեթե փակ էր, և որը կարող է շատ բան սովորեցնել մեզ՝ արևմտացիներին: Ձեր նախաձեռնած աշխատանքը բնավ դյուրին չէ, և ես բոլոր նրանց անունից կարտահայտվեմ, ովքեր լսել են Ձեր դասախոսությունները, այդ թվում և բացառիկ նշանակության և գիտական աշխարհում համաշխարհային ճանաչման արժանացած այրերի, եթե պնդեմ, որ Ձեր տքնաջան աշխատանքը և ջանքերը գուր չեն: Դուք անգնահատելի ծառայություն մատուցած կլինեք արդի գիտությանը եթե հրապարակեք Ձեր աշխատությունները, և ես անչափ ուրախ կլինեմ, եթե կարողանամ օժանդակել Ձեզ այդ գործում»: Օ. Ֆլայշերը նշել է. «... Հայ երաժշտության մասին...»: Իսկ ի՞նչ է կատարվում վերը նշածս գրքում: Հեղինակը նամակի ամբողջական տեքստից կտրել է մի հատված, վարպետորեն հարմարեցրել իր գրածին, որպեսզի ընթերցողին թվա, թե Օ. Ֆլայշերի խոսքերը քուրդ-եզդիական երաժշտության մասին են, և, որպես իր զեղծարարության հիմնավորում գրում է. «...Մորից Վազների՝ արևելքի ժողովուրդներին և քրդերին նվիրված գրքից 47 տարի անց

Գերմանիայում կրկին լայն հասարակությանն է ներկայացվում եզդիներին և քրդերին վերաբերող գիտական բանախոսություն, այս անգամ՝ զուտ երաժշտական արվեստի մասին, որ հեղինակի՝ Կոմիտասի շնորհիվ ունկնդիրներին է հասնում առանձնահատուկ հմայքով ու խորությամբ: Ոչ մի բառ հայ երաժշտության մասին: Այն չկա, գոյություն չունի: Կարելի է կարծել, թե Վարդապետն իր աշխատությունները գրել է քրդական երգերի հիման վրա՝ նպատակ ունենալով աշխարհին հիշեցնել դրանց մասին: Այսպիսով՝ աղավաղված, աղճատված ու նսեմացված է ոչ միայն Կոմիտաս վարդապետի այլև ականավոր գիտնական Օսկար Ֆլայշերի կենսագրությունը: Ինչ է սա, եթե ոչ ցեղասպանության նոր՝ արդիական դրսևորում: Բոլորովին վերջերս՝ 2005 թվականին Ջուդայում, որ գտնվում է Իրանի և Նախիջևանի սահմանին, կազմակերպված, ծանր տեխնիկա կիրառելով հողին հավասարեցրեցին հայ մշակույթի այնպիսի կոթողներ ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական արժեքների ցանկում գրանցված 2000 – ից ավել խաչքարերն են: Դա կատարվեց օրը ցերեկով, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ: Նպատակը՝ ապացույցների ոչնչացումով հայի հետքն իր պատմական երկրից ջնջելն էր: Ադրբեջանի իշխանությունները հաշվի չառան ՅՈՒՆԵՍԿՕ-ի հորդորները ջարդը դադարեցնելու մասին, իսկ այսօր այդ կազմակերպության ղեկավարն է փորձում դառնալ մի մարդ՝ Փոլադ Բյուլբյուլօղլին, ով այդ թվականներին Ադրբեջանի մշակույթի նախարարն էր և, գոնե ի պաշտոնե, պարտավոր էր կանխել վանդալիզմը: Դրան հաջորդեց ադրբեջանցիների կողմից 2009-ին, արդեն սահմանակից Իրանի տարածքում գտնվող, հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցու ավերումը, որի վերականգնումով 2012-2015-ին զբաղվեցին Իրանի իշխանությունները (Armenisch-Deutsche Korrespondenz, 2016): Մյուս դեպքում ակնհայտ ցինիզմով սպականվում է գիտությանը մեծագույն նպաստ բերած վարդապետների՝ Կոմիտասի և Ֆլայշերի գործը: Նա ոչ միայն Կոմիտասի ուսուցիչն էր, այլ նաև հայոց միջնադարյան երաժշտության գրանցման՝ խազային համակարգն ուսումնասիրողներից մեկը: Քանի որ անհնար է ծանր տեխնիկայով ոչնչացնել ոչ նյութեղեն արժեքները՝ երգը կամ պարը, ուրեմն կարելի է այն վերագրել մեկ այլ մշակույթի: Ոչինչ, որ այդ „մեկ այլը“, երբևէ կրողը չի եղել երաժշտական մտածողության զարգացած այն համակարգի, որը ստեղծել կարող էր միայն զարգացած մշակույթ ունեցող ժողովուրդը: Երբ չի կանխվում, չի դատապարտվում չարիքը, սպա այն փորձում է ավելի մեծ տարածքներ նվաճել: Օրինակ՝ հայկական մշակույթն աղավաղելուն զուգահեռ անցնել Գերմանիա և „խմբագրել“, Օ. Ֆլայշերի մտքերը: Գիտությունը բացարձակ արժեքների տիրույթ է, այն նեղ, խմբական կամ ազգային շահերին հարմարեցնելու առարկա չէ և պետք է պաշտպանված լինի օրենքով: Բոլորովին վերջերս Գերմանիայի Բունդեսթագն ընդունեց բանաձև, որով ճանաչեց և դատապարտեց հարյուր տարի առաջ հայ ժողովրդի հանդեպ թուրքական իշխանությունների իրագործած ցեղասպանությունը: Երևի թե ժամանակն է գործի դնելու բանաձի դրույթները,

որովհետև գեղծարարները Օ. Ֆլայշերից հետո կանցնեն Մաքս Չայեֆերտին, որը նույնպես նամակագրություն ուներ վարդապետի հետ: Չի կարելի լռել երբ պղծվում, աղավաղվում և ոչնչացվում է հազարամյակների ընթացքում կերտված մի բարձր ու վսեմ մշակույթ, որը համամարդկային քաղաքակրթության պատմության անբաժանելի մասն է: Այսօր շատ մոդայիկ դարձած տոլեռանտությունն այստեղ նշանակում է սերունդներին դատապարտել անդամ, ինքնությունից զուրկ գոյության, իսկ համամարդկային արժեհամակարգը նսեմացնել, ցածրացնել, որակազրկել այնքան, մինչև այն դադարի այդպիսին լինելուց: Որովհետև կեղծողի, գեղծարարի, ցեղասպանի համար ժամանակի և տարածության սահմաններից դուրս արժեքներն անհասանելի, անմատչելի են: Իսկ այն, ինչը դուրս է իր մտահորիզոնից և խորթ է իր հոգեկերտվածքին, խանգարում է իրեն: Ո՞րն է նրա հաջորդ գոհը: Արդյո՞ք կսկսեն «խմբագրել», Le Mercure Musical ամսագրի հիմնադիր, երաժշտագետ և երաժշտական քննադատ Լուի Լալուային: Չէ որ այդ ամսագիրը տպագրել է Կոմիտաս վարդապետի հողվածները: Կամ Պյեռ Օբրին, որը մի քանի ամիս բնակվել է Հայաստանում Կոմիտասի հետ հայ ժողովրդական երաժշտությունն ուսումնասիրելու համար: Միգուցե Հայր Դոնոստիան, որը բասկերի ազգային երաժշտությունն էր ուսումնասիրում և մշակում կոմիտասյան մեթոդիկական հիմք ընդունելով: Ո՞վ է հաջորդը:

WWW.NEWARKPROJECT.INFO